

Պատրմության օլիմպիադայի մարզային փուլ (2023-2024 ուստարի)

12-րդ դասարան (տևողությունը՝ 150 րոպե)

ա) Հայոց պատրմություն (15 միավոր)

- Ե՞րբ է հրավիրվել Հայոց եկեղեցու առաջին ազգային-եկեղեցական ժողովը. 0,5 մ.
ա) 350 թ. բ) 303 թ. գ) 345 թ. դ) 354 թ.
- Ո՞վ է կերտել նոր շրջանի հայ կերպարվեստի առաջին կոթողային քանդակը. 0,5 մ.
ա) Երվանդ Ոսկան բ) Անդրեաս Տեր-Մարության գ) Երվանդ Քոչար դ) Արա Սարգսյան
- Ո՞ր գավառում էր գտնվում Ակոռի գյուղը. 0,5 մ.
ա) Մասյացոտն բ) Արագածոտն գ) Կոտայք դ) Ոստան Հայոց
- Ո՞վ է 1937 թ. ընտրվել ՀԿ(Բ)Կ կենտկոմի առաջին քարտուղար. 0,5 մ.
ա) Աղասի Խանջյան բ) Աշոտ Հովհաննիսյան գ) Սուրեն Թովմասյան դ) Գրիգոր Հարությունյան
- Ո՞ր թվականին է վերացել Խորհրդային Հայաստանի գավառային բաժանումը. 0,5 մ.
ա) 1923 թ. բ) 1936 թ. գ) 1930 թ. դ) 1940 թ.
- Քանի՞ զորականներով էր Արտագերսում ամրացել Փառանձեմ թագուհին. 0,5 մ.
ա) 10 հազար բ) 8 հազար գ) 6 հազար դ) 11 հազար
- Ո՞ր շարքի բոլոր կառույցներն են կառուցել Պահլավունիները. 0,5 մ.
ա) Մարմաշեն, Բջնի, Ամբերդ բ) Ամբերդ, Բջնի, Արգինա
գ) Մարմաշեն, Հառիճ, Բջնի դ) Մարմաշեն, Հառիճ, Ամբերդ
- Ե՞րբ է Մխիթար սպարապետը թուրքերին պարտության մատնել Օրդուբադում. 0,5 մ.
ա) 1727 թ. բ) 1728 թ. գ) 1729 թ. դ) 1730 թ.
- Ե՞րբ է Լևոն Մեծագործը գրավել Լամբրոն բերդը: 0,5 մ.
- Ո՞ր պատմիչի աշխատությունն է ընդգրկում 1000-1071 թթ. իրադարձությունները: 0,5 մ.
- Ո՞ւմ մտահղացմամբ է կազմակերպվել Խանասորի պատժիչ արշավանքը: 0,5 մ.
- Որքա՞ն էր հայկական բանակի ընդհանուր թիվը 1920 թ. թուրք-հայկական պատերազմի ժամանակ: 0,5 մ.
- Դասավորե՛ք ըստ հիմնադրման ճիշտ հաջորդականության. 1 մ. (1 սխալի դեպքում՝ 0 մ.)
ա) Էջմիածնի հոգևոր (Գևորգյան) ճեմարան
բ) Լազարյան ճեմարան
գ) Արմաշի դպրեվանք
դ) Շուշիի թեմական դպրոց
ե) Աղաբաբյան դպրոց
զ) Սանասարյան վարժարան
է) Ներսիսյան դպրոց
ը) Վարագավանքի Ժառանգավորաց վարժարան
թ) Երևանի թեմական դպրոց

1	2	3	4	5	6	7	8	9

- Կազմե՛ք համապատասխան զույգեր. 1,5 մ. (6 X 0,25 մ.)
1. «Պատմութիւն Հայոց» 2. «Անի» 3. «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում»
4. «Ազգապատում» 5. «Քննական պատմութիւն Հայոց»
6. «Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւնը եւ Կովկասի հայք XIX դարում»
ա) Ն. Ադոնց բ) Ա. Գարագաշյան գ) Ն. Մառ
դ) Ա. Երիցյան ե) Ս. Պալասանյան զ) Մ. արք. Օրմանյան

1	2	3	4	5	6

- Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)
ա) Սան Ստեֆանոյի հաշտությամբ Ռուսաստանին էին անցնում Կարսի, Կաղզվանի, Օլթիի, Արդահանի, Ալաշկերտի և Բայազետի գավառները, Սև ծովի առափնյա շրջանները՝ Բաթում նավահանգստով:
բ) Սան Ստեֆանոյի պայմանագրի 61-րդ հոդվածով Բարձր Դուռը պարտավորվում էր Արևմտյան Հայաստանում ռուսների գրաված և Թուրքիային վերադարձվող գավառներում բարեփոխումներ անցկացնել:
գ) «Հայասեր-ազգասեր» խմբակը գաղտնի տպագրում էր «Ազատության ավետաբեր» թերթը:
դ) Սայքս-Պիկոյի համաձայնագրով Օսմանյան կայսրության տարածքը բաժանվում էր Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի միջև:

- ե) Բեռլինի պայմանագրով Ալաշկերտն ու Բայազետի գավառը վերադարձվում են Օսմանյան կայսրությանը:
- զ) Արևմտյան Հայաստանում ստեղծված առաջին խմբակներից է «Հայրենիքի սիրո գրասենյակը»:
- է) «Սև խաչ» կազմակերպության 40 դատապարտված անդամներից հինգի նկատմամբ դատարանը մահապատժի վճիռ է կայացրել:
- ը) «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունն ունեցել է մոտ 30 անդամ, որոնք փորձել են զենք առաքել «թուրքահայ եղբայրներին»:
- թ) Հնչակյան կուսակցության ծրագրում որպես հեռավոր նպատակ սահմանվել է Արևմտյան Հայաստանի ազատագրումը թուրքական բռնապետությունից:

1	2	3

16. Ընտրե՛ք տերմինների 2 ճիշտ բացատրությունները: 1 մ. (2 X 0,5 մ.)
- ա) Զորանամակով սահմանվում էր յուրաքանչյուր նախարարի զորքի թիվն ու տեղը մարտադաշտում:
 - բ) Ժամանակի ընթացքում Արշակունյաց շառավիղներից ձևավորված առանձին ազնվական խավի ներկայացուցիչները կոչվում էին ոստանիկներ:
 - գ) Ուրարտուում թագավորին կից գործող Ավագների խորհրդի անդամները կոչվում էին արքայի «փոխանորդներ»:
 - դ) Վաղմիջնադարյան Հայաստանում արքայի անձի պաշտպանությունն ապահովող ընտրյալ նետաձիգներից կազմված և մշտապես արքային ուղեկցող զորախումբը կոչվում էր ոստանիկ այրուծի:
 - ե) Մեծ Հայքի սահմանակալ չորս նահանգների՝ Աղձնիքի, Գուգարքի, Շիրակի և Կորդուքի տերերը կոչվում էին բղեշխներ:
 - զ) Ուշ միջնադարում հայ իշխանական տների ներկայացուցիչները, որոնք մի շարք վայրերում վերականգնել էին իրենց իշխանությունն ու վարչական կառավարումը, կոչվում էին պարոնտեր:
 - է) Ուշ միջնադարում հայ կալվածատերերը, որոնք իրենց սեփական տիրույթները հանձնել էին եկեղեցուն և, հոգևոր կոչումներ ընդունելով, շարունակում էին տիրել իրենց կալվածքներին, կոչվում էին տիրացուներ:
 - ը) Հայոց աշխարհի կարևորագույն հարցերը քննարկելու նպատակով հրավիրվող (մինչև IV դ. երկրորդ կեսը) համաժողովրդական ժողովը կոչվում էր աշխարհաժողով:

1	2

17. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 սխալ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)
- ա) Փիլարտոս Վարաժնունին, հենվելով հիմնականում հայերից կազմված զինուժի վրա, կարողացել է որոշ ժամանակ դիմագրավել սելջուկների առաջխաղացմանը դեպի հայկական իշխանության սահմանները:
 - բ) 1197 թ. խաչակիրների երկու բանակներ էին մտել Կիլիկիա և ձեռնամուխ եղել Դաշտային Կիլիկիայի քաղաքների նվաճմանը, սակայն, քանի որ Կոստանդին I-ը վերահսկում էր Տավրոսի լեռնանցքները, խաչակիրները հարկադրված էին համագործակցել նրա հետ:
 - գ) Կիլիկիայի հայկական իշխանությունը հիմնադրման սկզբնական շրջանում ընդգրկում էր Կիլիկիայի մի մասը, հետագայում զորեղանալով՝ իր մեջ ներառեց նաև Կիլիկիայից դուրս գտնվող մի շարք շրջաններ:
 - դ) 1042 թ. Կիլիկիայի կառավարիչ նշանակված Սենեքերիմ Արծրունուն էին հանձնվել Մսիս, Արանա, Տարսուն քաղաքները և Լամբրոն ու Պապեռոն ամրոցները:
 - ե) Փոքր Ասիայում ստեղծված Իկոնիայի սուլթանության և Կիլիկյան Հայաստանի փոխհարաբերություններին բնորոշ էին թշնամանքը և մշտական ռազմական առճակատումը:
 - զ) 1724 թ. Երևանի պաշտպանությունը շարունակվել է ավելի քան երեք ամիս:
 - է) Կիլիկյան Հայաստանի գահակալ Լևոն I իշխանը, հույն Մանդալեի երեք որդիներին ձերբակալելով և մահապատժի ենթարկելով, լուծել է Հայոց թագավոր Գագիկ II Բագրատունու սպանության վրեժը:
 - ը) 1724 թ. Արցախի ազատագրական ուժերը թուրքական բանակի դեմ համատեղ պայքարի պայմանագիր են կնքել Գանձակի մահմեդականների հետ:
 - թ) Պարսից շահը 1724 թ. ճանաչել է Սյունիքում ստեղծված հայկական իշխանությունը, Դավիթ բեկի հետ դաշինք է կնքել և նրան դրամ հատելու իրավունք վերապահել:

1	2	3

18. Գտե՛ք և ուղղե՛ք սխալը. 1 մ.
 1986 թ. ՀԽՍՀ գյուղական բնակչության թվաքանակը հասավ 2 մլն 300 հազարի, իսկ մայրաքաղաք Երևանի բնակչությունը հասավ 1 մլն 140 հազարի:
 Ուղղում. ոչ թե՛ _____ (նշե՛ք սխալը, 0,5 մ.), այլ՝ _____ (նշե՛ք ճիշտը, 0,5 մ.):

19. Կարդացե՛ք սկզբնաղբյուրից մեջբերումը և պատասխանե՛ք հարցերին. 1,5 մ. (3 X 0,5 մ.)
 «Ամեն ոք իր մասին է մտածում: Իր երկրի սահմաններից այն կողմ եթե նայող կա, նայում է միայն հանուն իր շահերի: ...Մենակ ենք և պետք է ապավինենք միայն մեր ուժերին՝ թե՛ ճակատը պաշտպանելու և թե՛ երկրի ներսում կարգ հաստատելու համար»:
 ա. Ո՞ւմ խոսքից է մեջբերված հատվածը:
 բ. Որտե՞ղ են ասվել մեջբերված խոսքերը:
 գ. Ո՞վ էր մեջբերված խոսքերի հեղինակին գործուղած ներկայացուցչական մարմնի քարտուղարը:

բ) Համաշխարհային պատմություն (5 միավոր)

1. Ո՞ւմ գլխավորությամբ է աթենական աշխարհագրը Մարաթոնի ճակատամարտում հաղթել պարսիկներին.
 ա) Միլթիադես բ) Լեոնիդաս գ) Թեմիստոկլես դ) Ալկիվիադես 0,5 մ.
2. Ո՞վ է Միջին Իտալիան նվիրել Հռոմի աթոռին, որով առաջացել է պապի աշխարհիկ պետությունը. 0,5 մ.
 ա) Կարլոս Մարտել բ) Պիպին Կարճահասակ գ) Կարլոս Մեծ դ) Քլոդվիգ
3. Ե՞րբ է տեղի ունեցել «Բարդուղիմեոսյան գիշերը».
 ա) 1562 թ. օգոստոսի 24 բ) 1517 թ. հոկտեմբերի 31 գ) 1527 թ. մայիսի 31 դ) 1572 թ. օգոստոսի 24 0,5 մ.
4. Ո՞վ է վերծանել եգիպտական գաղափարագիրը. 0,5 մ.
 ա) Հ. Շլիման բ) Ժ. դ'Ալամբեր գ) Ֆ. Շամպոլյոն դ) Ռ. Դեկարտ
5. Ի՞նչ էր կոչվում Անգլիայում կանանց ընտրական իրավունք տալու պայքարին մասնակից կինը. 0,5 մ.
6. Համապատասխանեցրե՛ք. 1 մ. (4 X 0,25 մ.)
 1. Առաջին հանրապետություն 2. Երկրորդ հանրապետություն
 3. Առաջին կայսրություն 4. Կոնսուլություն
 ա. 1804-1814 թթ. բ. 1848-1852 թթ. գ. 1792-1804 թթ. դ. 1799-1804 թթ.

1	2	3	4

7. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)
- ա) 1935 թ. մարտին Հիտլերը Գերմանիայում մտցրել է համընդհանուր զինվորական ծառայություն ու ձեռնամուխ եղել ուժեղ բանակի և օդուժի ստեղծմանը:
 - բ) 1938 թ. գերմանական բանակը ներխուժել է Ազգերի լիգայի անդամ Եթովպիա և ռազմակալել վերջինիս մայրաքաղաք Ադիս Աբեբան:
 - գ) 1937 թ. ապրիլին ֆաշիստական Իտալիայի զորքերը գրավել ու բռնակցել են Ավստրիան, որը, որպես ինքնիշխան պետություն, դադարեց գոյություն ունենալուց:
 - դ) 1939 թ. գարնանը Ճապոնիան ռազմական գործողություններ է սկսել ԽՍՀՄ-ի դաշնակից Մոնղոլիայի դեմ:
 - ե) 1938 թ. հոկտեմբերին Գերմանիան զավթել է ամբողջ Չեխոսլովակիան, ընդ որում՝ Չեխիան ու Մորավիան դարձան գերմանական պրոտեկտորատ, իսկ Սլովակիան հռչակվեց միապետություն:
 - զ) 1939 թ. սեպտեմբերի 3-ին Լեհաստանի դաշնակիցներ Անգլիան ու Ֆրանսիան պատերազմ են հայտարարել ֆաշիստական Իտալիային:
 - է) 1941 թ. մայիս-հունիսին ֆաշիստական Գերմանիան մեկը մյուսի հետևից գրավել է Դանիան, Նորվեգիան, Շվեդիան, Նիդերլանդները, Բելգիան, Լյուքսեմբուրգը և Շվեյցարիան:
 - ը) 1936 թ. նոյեմբերի 25-ին Հռոմում Գերմանիան, Իտալիան և Ճապոնիան ստորագրել են «Հակակոմունտերնյան պակտը»:

1	2	3

Հանրապետական օլիմպիադայի
 հանձնաժողովի նախագահ՝

ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի դոցենտ,
 պատմ. գիտ. թեկնածու Մ. Մալխասյան

05.02.2024 թ.